Արձանագրություն N 3

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար մարդատար ավտոբուսի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՐՋԷԿ-ԳՀԱՊՁԲ 25/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Երևան

09.10.2017թ.
ժ. 11:00-ին

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Եսայանը

Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Մուրադյանը

Յու. Ջահավիրյանը

Ե. Աբելյանը

Ա. Վարդապետյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանը

Նիստի օրակարգը.

1. «ԵՐՋԷԿ-ԳՀԱՊՁԲ 25/17» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Մուլտի Մոթորս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի գնահատման արդյունքների հաստատման մասին:

Հարց 1.

Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվությունը, «Մուլտի Մոթորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝

Որոշեց՝

1.Հաստատել գնահատման արդյունքները.

• Առաջին տեղ զբաղեցրած «Մուլտի Մոթորս» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով՝ անհրաժեշտ է տեղեկագրում հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Հանձնաժողովի նախագահ՝		Գ. Եսայան
Հանձնաժողովի անդամներ՝		Ս. Մուրադյան
		Յու. Ջահավիրյան
		Ե. Աբելյան
		Ա. Վարդապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝		Ա. Պետրոսյան